

ՀՀ Կառավարությանն առընթեր
Պետական եկամուտների կոմիտեի
իրավաբանական վարչություն

20253812
ՀՎՀՀ
ՀԾՀ՝ 4112630026

Վարդան Հրաչիկի Նադարյան

անուն, ազգանուն, հայրանուն

ք. Երևան, Մամիկոնյանց 19 շ., 24 փ.

հաշվառման /բնակության/ հասցե

ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1337-Ն որոշման հիման վրա ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ Ձեր կողմից 2020թ. օտարվել է ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ձ. Սարկավազի փ. 117/1շ., 22 բ. հասցեում գտնվող անշարժ գույքը:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգրք) 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «բ» ենթակետի՝ վերոնշյալ գույքի օտարումը չի համարվում հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտ, իսկ գույքի օտարումից ստացվող եկամուտներն այլ հավասար պայմաններում համարվում են եկամտային հարկով հարկման օբյեկտ՝ համաձայն Օրենսգրքի 141-րդ հոդվածի:

Համաձայն հարկային պարտավորությունների հաշվարկման վերաբերյալ 13.05.2021 թիվ 12898/2021/ԿՈՒՎ4/Ն տեղեկանքի՝ Ձեր կողմից չկատարած հարկային պարտավորությունը 13.05.2021թ. դրությամբ կազմել է 6.223.625 դրամ:

Տեղեկացնում ենք, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Նշված հարկային պարտավորությունները սահմանված ժամկետում չկատարելու դեպքի առթիվ, ի կատարումն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների՝ առաջարկում ենք սույն ծանուցումը ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11-ին ներկայանալ վարչական վարույթի նախնական լուսմներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և/կամ առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս. Դավթի 87 ա: Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

Տեղեկացնում ենք նաև, որ վերը նշված պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկային մարմնի կողմից կարող է կիրառվել հարկ վճարողի դրամական միջոցների և գույքի արգելադրում ՀՀ հարկային օրենսգրքի 78-րդ գլխի համաձայն:

ՀՀ ՊԵԿ ԻՎ ՀԳ և ՊԿԱ բաժնի առաջատար մասնագետի՝
հեռ.՝ 011-54-91-91/91-68/

Լ. Զաղաջպանյան

4/Հնս/2021